# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Էկոբիլդինգ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 9-ին կնքված N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/13 ծածկագրով «Կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** «9» 04 **2024թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Էկոբիլդինգ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս «Էկոբիլդինգ» ՍՊԸ-ի տնօրեն Կառլեն Մինասյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև **2024թ. փետրվարի 9-ին կնքված «ՀՀ Վայոց ձորի մարզի գ. Արենի միջնակարգ դպրոցի կառուցման» աշխատանքների** պետական գնման **N ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/13** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ կերպ.

«Կապալառուն ապահովում է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը»:

2. Պայմանագրի 5.1.1 կետի 5-րդ պարբերությունից հանել «Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված և/կամ» բառերը:

3. Պայմանագրի 3.1.8 կետից հանել «Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված և/կամ» բառերը:

4. Պայմանագրի 3.4.11 կետից հանել «Պայմանագրի 5.1.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված և» բառերը:

5. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

6. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

7. Համաձայնագիրը կազմված է երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են

Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Էկոբիլդինգ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՎՁՄ, ք. Վայք, Երկրաբանների փողոց 7 |
| ՀՎՀՀ՝00846441 | ՀՎՀՀ՝ 08914368 |
| Հ/Հ՝ 900011051902 | Հ/հ՝ 2500010890940100 |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն Մարգիս Բաղինյան | Տնօրեն Կարեն Մինասյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |